ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Հյուսիսային Հայաստանում երկրաշարժի զոհերի՝ Վիրահայոց թեմի բոլոր տաճարներում կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Մարդաշատ էր հատկապես Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին, ուր հոգեհանգստյան արարողությունն անցավ հանդիսապետությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և մասնակցությամբ տեղի հոգևոր դասի:

Հավարտ արարողության Սրբազան Հայրն իր խոսքն ուղղեց եկեղեցում հավաքված ներկաներին: Հիշատակի իր խոսքում քաջալերելով համայն հայությանն ու հորդորելով ապրել Աստծու պատվիրաններով՝ Վազգեն եպիսկոպոսն իր օրհնությունն ու երախտագիտությունը հայտնեց այդ օրերին հայությանն առաջին օգնություն ցուցաբերած եղբայրական վրաց ժողովրդին: Վիրահայոց սուրբ տաճարում իրենց ներկայությամբ ու աղոթքով զոհերի խնկաբույր հիշատակը ոգեկոչեցին Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանն ու դեսպանատան աշխատակազմը, քաղաքացիական ինտեգրացիայի պետնախարար Զինաիդա Բեստանան, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի Հայերի Միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի գրողների միության անդամներ, թարգմանիչ-բանաստեղծներ Գիվի Շահնազարը և Անահիտ Բոստանջյանը, Թբիլիսիի հայկական դպրոցների ուսուցիչները և սաները:

Հոգեհանգստյան պաշտոններ կատարվեցին նաև թեմի Ծալկայի շրջանի Ղզլքիլիսա գյուղում և Մառնեուլիի շրջանի Շահումյան ավանում:

Զոհերի հիշատակը հավերժացնող արարողություն տեղի ունեցավ նաև Բաթումի Սուրբ Փրկիչ և Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի հայկական եկեղեցիներում:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ